

## Հաշվետվություն

Վայոց ձորի մարզի կրթության, մշակույթի և սպորտի վարչության

### **Կրթություն**

Հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկում է 2013թ. առաջին կիսամյակը:

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 15 հիմնական և 35 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան, 3-ը ավագ դպրոց ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Մարզային ենթակայությամբ գործող 47 դպրոցներում աշակերտական համակազմը 2013-2014 ուստարում կկազմի 6057 աշակերտ, որոնք կկոմպլեկտավորվեն 472 դասարաններում: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 57 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2 և Վայքի հիմնական դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Համայնքների ղեկավարների, մարզի վիճակագրական ծառայության և ԶԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով իրականացվել է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, ինչի արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզային ենթակայության 47 դպրոցներում աշխատում են 1021 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն կրթություն (84%-ը), մնացած 170-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Ուսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1 : 6

Դասարանի միջին խտությունը 13 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17,1 ժամ:

Դպրոցների կառավարման խորհուրդների լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ սահմանված կարգով ձևավորվել են կառավարման նոր խորհուրդներ, որոնց անվանական կազմը հաստատվել է մարզպետի 2012թ. Հոկտեմբերի 12-ի որոշմամբ:

Բոլոր դպրոցներն ապահովվել են համակարգիչներով և միացվել են համացանցին: Համակարգիչներով դպրոցները շարունակվում են համալրվել:

Տարբեր առարկաների գծով նախորդ ուստարում վերապատրաստվել և ատեստավորվել են 190 ուսուցիչներ: Ներկայումս ընթանում են հերթական վերապատրաստումներ, որոնցում ընդգրկված են շուրջ 170 ուսուցիչներ:

Մարզի 6 դպրոցներում տնօրենի պաշտոնի մրցույթ կկազմակերպվի հուլիսին, քանի որ լրացել է նրանց աշխատանքային պայմանագրի ժամկետը:

Ապահովված է դպրոցական շենքերի պահպանությունը: 2012թ. վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մարզի 3 դպրոցներում /Քարագլուխ, Խաչիկ, Արենի/:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը:

Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել է շուրջ 800 աշակերտ, որոնցից 29-ը մասնակցել են հանրապետական փուլին: Նրանցից 7-ը պարգևատրվել են գովասանագրերով և դիպլոմներով:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են դպրոցականների զանազան մրցույթներ (ասմունքի հանրապետական փառատոն, ընթերցանության հանրապետական մրցույթ, <Կենգուրու> միջազգային մաթեմատիկական մրցույթ և այլն), որոնց ակտիվորեն մասնակցել և մրցանակային տեղեր են գրավել մարզի աշակերտները:

Պատշաճ մակարդակով է կազմակերպվել <Տարվա առարկայական լավագույն ուսուցիչ>, <Տարվա լավագույն տնօրեն>, <Տարվա լավագույն դաստիարակ> մրցույթները և հաղթողները ներկայացվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:

Աշխատանքներ են տարվում դպրոցական գույքը թարմացնելու, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:

Մարզում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր միջնակարգ դպրոցներն ապահովվել են զինվորական կաբինետներով և ուսումնական զենքով: Մարզի դպրոցների և մարզում տեղակայված 4-րդ բանակային կորպուսի միջև ստեղծվել է սերտ համագործակցության մթնոլորտ: Ինչպես ամեն տարի այս տարի ևս կազմակերպվել է հրաձգություն մարտական զենքից, որտեղ մեր աշակերտները ցուցաբերել են լավագույն արդյունքներ:

Ամեն տարի հուլիսի 1-ից օգոստոսի 8-ը մարզի սոցիալապես անապահով ընտանիքների և ծնողազուրկ 140 երեխաներ 2 փուլով իրենց ամառային հանգիստն են անցկացնում Հանքավանի <Հասմիկ> ճամբարում:

Մարզում գործում է համայնքային ենթակայության 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 805 երեխաներ:

Մարզի 22 համայնքներում բացվել են նախակրթարաններ, որոնցում ընդգրկվել են 4-5 տարեկան 482 երեխաներ 22 խմբով: Այս տարի նախատեսվում է բացել նախակրթարան ևս 4 համայնքներում:

### **Հիմնախնդիրներ**

1. Աշակերտների թվի պակասելու պատճառով թերկոմպլեկտավորված դասարաններում կրթությունը կազմակերպվում է ոչ լիարժեք:
2. Մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, ինչի հետևանքով այդ համայնքներում անլուծելի է մնում նախադպրոցական կրթության, որպես միջնակարգ կրթության նախապատրաստման կարևորագույն օղակի, խնդիրը:
3. Ռեսուրսների վերապատրաստումները տվյալ տարում նպատակահարմար է կազմակերպել ըստ առարկաների:
4. Դպրոցների ֆինանսավորման գործող կարգի վերանայում:
5. Հիմնական դպրոցներում ուսումնական թերձանրաբեռնվածության հետևանքով հնարավոր են ուսուցիչների կրճատումներ:
6. Կենսաթոշակային տարիքի ուսուցիչների աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին:
7. Մարզի 3 քաղաքներում գործող ավագ դպրոցների տեղակայման հարցի վերանայում նկատի ունենալով տեղական առանձնահատկությունները և աշակերտների տեղափոխման ավելի արդյունավետ տարբերակի ընտրության անհրաժեշտությունը:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի

կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝

Ա. Ղազարյան